Արձանագրություն N 3
ԱՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Երևան 04 հունիսի 2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Քամալյան
Հանձնաժողովի
Գնահատող անդամներ՝ Ռ. Գրիգորյան, Ս. Ներսիսյան
Բացող անդամներ՝ Հ. Առաքելյան, Ս. Ղարիբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Գ. Քամալյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
(Գ. Քամալյան)

Ընդունել ի գիտություն, որ հունիսի 03-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Համաձայն վերը նշված տեղեկատվության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

ԱՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին իր՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակից ճանաչել՝	
1	Խաչպար ՍՊԸ	1

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Գ. Քամալյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում;

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում, ուստի ընտրված մասնակցին ուղարկել նաև պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Քամալյան)

ԱՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու օրվան հաջորդող օրվանից հաշված երեք օրվա ընթացքում, <<ԱՐՄԵՆԻԿՈՒՄ>> ՓԲԸ, ք. Երևան, Գ.Շերամի 2 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Գ. Քամալյան

Գնահատող անդամներ՝ Ռ. Գրիգորյան

Ս. Ներսիսյան

Բացող անդամներ՝ Հ. Առաքելյան,

Ս. Ղարիբյան

Քարտուղար՝ Է. Գրիգորյան